ԵԴ/0541/01/18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

18 հունվարի 2023 թվական　　　　　　　　　　ք.Երևան

Ուսումնասիրելով թիվ ԵԴ/0541/01/18 քրեական գործի ընդդատության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի հունվարի 11-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2018 թվականի հուլիսի 18-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ 69103618 (ԵԴ/0541/01/18) քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Սերոբ Պողոսի Դավթյանի՝ երկու դրվագ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և երկու դրվագ՝ 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Սերգեյ Ռաֆիկի Հովհաննիսյանի, Ռոբերտ Ռուդոլֆովիչ Սարխոշևի և Վահագն Ռուբիկի Սարգսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և Պողոս Ալիբեկի Դավթյանի՝ ՀՀ

քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 38-266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և 2018 թվականի հուլիսի 20-ին ընդունվել է նույն դատարանի դատավոր Ա.Վարդապետյանի վարույթ:

1.2. 2020 թվականի հունվարի 16-ին թիվ ԵԴ/0541/01/18 քրեական գործը վերամակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ.Մելքոնյանին:

1.3. 2022 թվականի սեպտեմբերի 14-ին վերոնշյալ քրեական գործը վերամակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ.Գրիգորյանին:

2022 թվականի սեպտեմբերի 16-ի որոշմամբ թիվ ԵԴ/0541/01/18 քրեական գործն ընդունվել է նույն դատարանի վարույթ և նշանակվել է դատական քննության:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի դեկտեմբերի 23-ին որոշում է կայացրել քրեական գործն ըստ ընդդատության Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

3. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, 2023 թվականի հունվարի 11-ի որոշմամբ, գործի ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար դիմել է Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին:

4. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի հունվարի 13-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. 2018 թվականի հունիսի 22-ի որոշմամբ ՀՀ քննչական կոմիտեի տարբեր ստորաբաժանումներում հարուցված և մեկ վարույթում միացված թիվ 20109817 քրեական գործից մեղադրյալներ Սերոբ Դավթյանի, Սերգեյ Հովհաննիսյանի, Ռոբերտ Սարխոշևի, Վահագն Սարգսյանի, Պողոս Դավթյանի և Նարինե Բոզոյանի վերաբերյալ մասով առանձնացված թիվ 69103618 քրեական գործով նախաքննությունն իրականացվել և ավարտվել է ՀՀ քննչական կոմիտեի գլխավոր

վարչության մարդկանց թրաֆիքինգի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչությունում[1]:

6. Սերոբ Դավթյանին՝ երկու դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և երկու դրվագ՝ 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Սերգեյ Հովհաննիսյանին, Ռոբերտ Սարխոշևին և Վահագն Սարգսյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և Պողոս Դավթյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 38-266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքների համաձայն՝ ամբաստանյալներին մեղսագրված ենթադրյալ արարքները կատարվել են Երևան քաղաքի և Կոտայքի մարզի վարչական տարածքներում: Այսպես,

- Ամբաստանյալներ Սերոբ Դավթյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և Սերգեյ Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով առաջադրված մեղադրանքներից հետևում է, որ վերջիններիս մեղսագրվող շարունակվող հանցագործությունների վերջին արարքը կատարվել է Երևան քաղաքի վարչական տարածում: Մասնավորապես, նշված դրվագով ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքների համաձայն՝ 2017 թվականի մարտի 10-ին, Սերգեյ Հովհաննիսյանը, Սերոբ Դավթյանի ցուցումով, թմրամիջոցն իրացրել է Ն.Սահակյանին և Հ.Արոյանին՝ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանում գտնվող ավտոշուկայի մոտակայքում:

- Սերոբ Դավթյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և Պողոս Դավթյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքների ուսումնասիրությունից հետևում է, որ 2017 թվականի մայիսի 29-ին Սերոբ Դավթյանը, Պողոս Դավթյանի միջոցով, թմրամիջոցն իրացրել է Հ.Կարեյանին և Թ.Մանուկյանին՝ Կոտայքի մարզի Նոր Հաճն քաղաքում:

- Ռոբերտ Սարխոշևին, Վահագն Սարգսյանին, Պողոս Դավթյանին և Սերոբ Դավթյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 20, թերթեր 1-13:

կետերով մեղսագրված՝ 2017 թվականի հուլիսի 7-ից հուլիսի 24-ն ընկած ժամանակահատվածում կատարած ենթադրյալ հանցավոր արարքների փաստական կողմի ուսումնասիրությունից հետևում է, որ վերջիններիս մեղսագրվող շարունակվող հանցագործությունների վերջին դրվագը կատարվել է Կոտայքի մարզի վարչական տարածքում: Մասնավորապես, համաձայն վերջիններիս առաջադրված մեղադրանքների՝ 2017 թվականի հուլիսի 24-ին կազմակերպված խմբի ղեկավար Ս.Դավթյանը, խմբի դեռևս չպարզված անդամի և Ռոբերտ Սարխոշևի միջոցով, թմրամիջոցն իրացրել է Կ.Իսաջանյանին՝ Կոտայքի մարզի Նոր Հաճն քաղաքում:

- Սերոբ Դավթյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքի փաստական կողմի ուսումնասիրությունից հետևում է, որ այն կատարվել է Կոտայքի մարզի տարածքում: Մասնավորապես, համաձայն վերջինիս առաջադրված մեղադրանքի՝ Սերոբ Դավթյանը 2017 թվականի նոյեմբերի 16-ին Ն.Բոզոյանի միջոցով թմրամիջոցն իրացրել է Ռ.Ղազարյանին՝ Կոտայքի մարզի Նոր Հաճն քաղաքում[2]:

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Սույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից պարզվել է, որ նախաքննության մարմնի՝ 2018թ. հունիսի 22-ի որոշմամբ թիվ 20109817 քրեական գործից ամբաստանյալների վերաբերյալ մասը առանձնացվել է առանձին վարույթում, դրան շնորհվել է թիվ 69103618 քրեական գործի համարը, որը 2018թ. հուլիսի 18-ին ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Հիշյալ քրեական քրեական գործով վերջին արարքը, որը վերաբերում է Սերոբ Դավթյանի կողմից Նարինե Բոզոյանի օժանդակությամբ 2017թ. նոյեմբերի 16-ին Ռաֆայել Ղազարյանին խոշոր չափերով թմրամիջոց ապօրինի իրացնելուն, ավարտվել է ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճն քաղաքում: Այլ խոսքով՝ սույն քրեական գործով վերջին՝ ամբաստանյալ Սերոբ Դավթյանին 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքն ավարտվել է ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճն քաղաքում, այսինքն՝ ՀՀ*

[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 21, թերթեր 313-348:

Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

Ինչ վերաբերում է 1998թ. հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված այն իրավակարգավորմանը, որի համաձայն՝ երկու կամ ավելի հանցագործությունների վերաբերյալ գործերն առաջին ատյանի տարբեր դատարաններին ընդդատյա լինելու դեպքում դրանք միացնելիս գործը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ավարտվել է տվյալ գործով մինչդատական վարույթը, ապա դատարանը գտնում է, որ հիշյալ իրավակարգավորումը սույն գործի փաստերի նկատմամբ կիրառելի չէ, քանի որ սույն քրեական գործով ամբաստանյալներին վերագրվող մեղադրանքների մասով թիվ 69103618 քրեական գործը ոչ թե միացվել, այլ անջատվել է թիվ 20109817 քրեական գործից, որը, որպես առանձին քրեական գործ, ուղարկվել է դատարան՝ ըստ էության քննելու համար: (…)»[3]*:*

8. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի հունվարի 11-ի որոշման համաձայն. «*(…) Հարկ է նաև արձանագրել, որ նշված դեպքերի առնչությամբ օրենքով սահմանված կարգով հարուցվել են քրեական գործեր, որոնք միացվել են մեկ վարույթում և նախաքննությունն իրականացվել ու ավարտվել է ՀՀ քննչական կոմիտեի գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչությունում: Կազմված մեղադրական եզրակացությունը հաստատվել է ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում և գործն ուղարկվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:*

Վերը մեջբերված փաստական տվյալներից ուղղակիորեն հետևում է, որ Սերոբ Դավթյանի, Սերգեյ Հովհաննիսյանի, Ռոբերտ Սարխոշևի, Վահագն Սարգսյանի, Պողոս Դավթյանի և Նարինե Բոզոյանի վերաբերյալ քրեական գործը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի կարգով ընդդատյա է այն դատարանին, որի դատական տարածքում ավարտվել է տվյալ

[3] Տե՛ս քրեական գործ, հատոր 32, թերթեր 111-124:

գործով մինչդատական վարույթը: Հետևաբար, քրեական գործը դատախազության կողմից իրավացիորեն ուղարկվել է և շուրջ չորս տարի քննվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում:

Ինչ վերաբերում է դատավոր Տ.Գրիգորյանի որոշման պատճառաբանությանը, որ սույն քրեական գործով կիրառելի չեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածում ամրագրված տարածքային ընդդատության կանոնները, քանի որ սույն քրեական գործով ամբաստանյալներին վերագրվող մեղադրանքների մասով թիվ 69103618 քրեական գործը ոչ թե միացվել, այլ անջատվել է թիվ 20109817 քրեական գործից, ապա հարկ է արձանագրել, որ հենց անջատված և որպես առանձին քրեական գործ ըստ էության քննության առնելու նպատակով դատարան ուղարկված գործով ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքները կատարվել և ավարտվել են տարբեր դատարանների վարչական տարածքներում, որպիսի պայմաններում գործն ըստ էության պետք է քննության առնվի նախաքննության մարմնի գտնվելու վայրի դատարանը և որևէ նշանակություն չունի այն հանգամանքը, թե շարունակվող արարքներից մեկի վերջին գործողությունը որտեղ է կատարվել: (…)»[4]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

9. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ/0541/01/18 քրեական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի*

[4] Տե՛ս քրեական գործ, հատոր 32, թերթեր 141-147:

առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[5]*:*

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]*:*

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (19-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[7]*:*

12. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Առաջին ատյանի դատարանին ընդդատյա են այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել են համապատասխան առաջին ատյանի դատարանի դատական տարածքում:*

2. Տևող հանցագործությունը համարվում է կատարված այն տարածքում, որտեղ այն ավարտվել է: Շարունակվող հանցագործությունը համարվում է կատարված այն տարածքում, որտեղ կատարվել է քրեական օրենսգրքով չթույլատրված վերջին արարքը»:

Նույն օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Երկու կամ ավելի հանցագործությունների վերաբերյալ գործերն առաջին ատյանի տարբեր դատարաններին ընդդատյա լինելու դեպքում դրանք միացնելիս գործը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ավարտվել է տվյալ գործով մինչդատական վարույթը»:*

Վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից բխում է, որ քրեական գործերի ընդդատության ընդհանուր կանոնն այն է, որ առաջին ատյանի դատարանին ընդդատյա են այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական

---

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

տարածքում: Միևնույն ժամանակ, օրենսդիրն առանձին կարգավորում է նախատեսել այն դեպքերի համար, երբ անձը մեղադրվում է երկու կամ ավելի հանցագործությունների մեջ, որոնք կատարվել են առաջին ատյանի տարբեր դատարանների դատական տարածքներում՝ ամրագրելով, որ այդ դեպքերում գործը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ավարտվել է տվյալ գործով մինչդատական վարույթը:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ՝

- 2018 թվականի հունիսի 22-ի որոշմամբ ՀՀ քննչական կոմիտեի տարբեր ստորաբաժանումներում հարուցված և մեկ վարույթում միացված թիվ 20109817 քրեական գործից մեղադրյալներ Սերոբ Դավթյանի, Սերգեյ Հովհաննիսյանի, Ռոբերտ Սարխոշևի, Վահագն Սարգսյանի, Պողոս Դավթյանի և Նարինե Բոզոյանի վերաբերյալ մասն առանձնացվել է առանձին վարույթում և շնորհվել 69103618 համարը[8]:

- Վերոնշյալ քրեական գործով նախաքննությունն իրականացվել և ավարտվել է ՀՀ քննչական կոմիտեի գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչությունում և քրեական գործը 2018 թվականի հուլիս 17-ին ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ քրեական գործն ըստ ընդդատության ուղարկվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան այն պատճառաբանությամբ, որ սույն քրեական գործով վերջին՝ ամբաստանյալ Ս.Դավթյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված արարքն ավարտվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում՝ Կոտայքի մարզի Նոր Հաճն քաղաքում[9]:

- Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի հունվարի 11-ին որոշում է կայացրել քրեական գործը ՀՀ Վճռաբեկ

---

[8] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության մասին վեճը լուծելու համար, այն պատճառաբանությամբ, որ սույն գործով կիրառելի է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը[10]:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ սույն գործով ամբաստանյալներին մեղսագրված են Երևան քաղաքի և Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանների դատական տարածքներում կատարված մեկից ավելի ենթադրյալ արարքներ, հետևաբար, սույն գործով ամբաստանյալներին մեղսագրված վերջին արարքի ավարտման վայրը չի կարող որոշիչ լինել: Ուստի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնը տվյալ դեպքում կիրառելի չէ:

Տվյալ դեպքում, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ամբաստանյալներին վերագրվող արարքների վերաբերյալ հարուցված և մեկ վարույթում միացված թիվ 20109817 քրեական գործից անջատված և որպես առանձին քրեական գործ ըստ էության քննության առնելու նպատակով դատարան ուղարկված թիվ 69103618 քրեական գործով ամբաստանյալներին մեղսագրված մեկից ավելի ենթադրյալ արարքները կատարվել են տարբեր դատարանների դատական տարածքներում, իսկ գործով նախաքննությունն ավարտվել է Երևան քաղաքում տեղակայված՝ ՀՀ քննչական կոմիտեի գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչությունում: Ուստի, սույն գործի ընդդատությունը որոշելիս անհրաժեշտ է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ քրեական գործերը միացնելիս ընդդատության որոշման հատուկ կանոնը, որի պայմաններում գործի ընդդատությունը ենթակա է որոշման ըստ մինչդատական վարույթի ավարտման վայրի:

15. Վերոգրյալի հաշվառմամբ և հիմք ընդունելով 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի

---

[10] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

իրավակարգավորումը, գտնում եմ, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ/0541/01/18 քրեական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր է:

Վերոշարադրյալի հիման վրա և համաձայն 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 22-րդ մասի՝ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ԵԴ/0541/01/18 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Սերոբ Պողոսի Դավթյանի՝ երկու դրվագ ՀՀ քրեական 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և երկու դրվագ՝ 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Սերգեյ Ռաֆիկի Հովհաննիսյանի, Ռոբերտ Ռուդոլֆովիչ Սարխոշևի և Վահագն Ռուբիկի Սարգսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և Պողոս Ալիբեկի Դավթյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 38-266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ